

(Պարիսի դատաւորապետներու) եւ թէ միւս բոլոր դատարաններու՝ որոնցմէ կախում պիտի ունենան ստացուածքները՝ իրաւասութիւնը կընդունի: Նաեւ յիշեալ կտակարարը փափագեցաւ եւ հասցեալ որ իր այս կտակը կա՛մ կտակի, կա՛մ յետկտակի եւ կամ ինչ որ աւելի ընդունելի ըլլայ՝ ա՛յն զօրութիւնն ունենայ, ետ առնելով եւ չեղեալ համարելով ներկայ կտակիս թուականէն առաջ իր ըրած միւս բոլոր կտակներն ու յետկտակիները:

Նոյնպէս, կտակարարս իր կտակակատարներէն՝ եւ կամ անկէ կամ անոնցմէ որ պիտի միջնորդեն իր կտակին գործադրութեան համար՝ կը խնդրէ եւ կաղաչէ, որ հասին աղերսել եւ պաղատիլ իրեն համար եւ իր անունով՝ Անգլիայի վեհափառ թագաւորին, Կաստիլիայի թագաւորին եւ Արագոնի թագաւորին, իր տէրերուն եւ եղբայրակիցներուն, անոնց աղաչելով, — որպէս զի Աստուած իրենց հոգիին գթայ եւ ներէ, երբ իրենց մարմնէն բաժնուի, — որ գթան եւ խղճան կտակարարիս հոգիին, եւ հասին իր վախճանած օրն իրեն պատկանող եկամուտները, ժամանակը լրացած պահանջներն եւ ամսականները դարձնել ու փոխանցել իր կտակին համաձայն, եւ բաժնել պատարագցունելու, ողորմութիւններու, բարեգործութիւններու եւ ուրիշ մարդասիրական ու գթութեան գործերու, իրենց կարգադրութեան համաձայն եւ կտակարարիս հոգիին փրկութեան համար:

Ասոր հաստատութեան համար մենք՝ վերոյիշեալ նօտարներուն խօսքին հետեւելով՝ յիշեալ դատաւորապետութեան կնիքը դրինք այս թղթին վրայ, որ երկու օրինակ գրուեցաւ եւ շնորհուեցաւ կտակարարիս հաւանութեամբն ու կարգադրութեամբ:

Յամին Շնորհաց 1392, շաբաթ, Յուլիսի 20-րդ օրը:

*Կերեւի թէ Լեւոնի կտակին պարունակութիւնը պաշտօնապէս ծանուցանելու եւ մանրամասնաբար բացատրելու համար է, որ Փրանկիսկոս Միւ տարի մը հոռ Սնգլիա կերթայ վեց ընկերներով, ինչպէս կը տեսնուի վերը շատ անգամ յիշուած Բայմերի հաւաքածուին 1394 ապրիլ 16 թուականի վաւերագրէն (հտ. Գ, մասն Դ, եր. 94), որ՝ նախորդներու նման՝ Անգլիայի մէջ ազատ կերպով չըջնելու համար տրուած արտօնագիր մըն է(1):*



(1) Աւելորդ կը սեպեմ ասոր բարգմանութիւնը դնել, քանի որ միւս համանման արտագրերէ մեծ տարբերութիւն մը չունի. բայց բնագիրը կը դնեմ զբիւ վերջը, զոր տեւ Document XXXI.